Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 01

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՀՐԴԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

ք. Գավառ **28.03.2025թ. ժամը 14:00**

ՀՀ Գեղարքունիքի մարզի խորհրդի նիստին մասնակցում էին մարզի խորհրդի 8 անդամներից 7-ը:

ՀՀ Գեղարքունիքի մարզպետի հրավերով մասնակցում էին ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար Սիմոն Մանուկյանը, մարզպետի խորհրդականներ Սևակ Խլղաթյանը և Ալբերտ Աղեկյանը, մարզպետի աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումների ղեկավարները:

Օրակարգում՝

1. **ՀՀ Գեղարքունիքի մարզի համայնքների կողմից, 2025 թվականի մարտի 1-ի դրությամբ, համայնքային բյուջեների կազմակերպման գործընթացի և պլանային ցուցանիշների վերաբերյալ.**

   /Զեկ. Յուրա Մուշեղյան - մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ/

2. **ՀՀ Գեղարքունիքի մարզի համայնքներում 2025 թվականի գարնանային գյուղատնտեսական աշխատանքների կազմակերպման ընթացքի վերաբերյալ.**

   /Զեկ. Անդրանիկ Ջրաղացպանյան - մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության գլխավոր մասնագետ/

3. **ՀՀ Գեղարքունիք մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության կողմից 2025 թվականի առաջին եռամսյակում կատարված աշխատանքների վերաբերյալ.**

   /Զեկ. Սասուն Սահակյան - մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ/

4. **ՀՀ Գեղարքունիք մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կողմից 2025 թվականի առաջին եռամսյակում իրականացված աշխատանքների և համայնքներում մանկապարտեզների կառուցման, լիցենզիաների ստացման և շահագործման մասին.**

/Զեկ. Կարեն Զազյան - մարզպետի աշխատակազմի կրթության,մշակույթի և սպորտի վարչության պետ/

5. ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության 2025 թվականի առաջին եռամսյակում կատարված աշխատանքների մասին.

/Զեկ. Լուսինե Վարդանյան - մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության վարչության պետ/

6. ՀՀ Գեղարքունիքի մարզի համայնքներում արտակարգ իրավիճակների կանխարգելման, քաղաքացիական պաշտպանության հիմնահարցերի և աղբավայրերի կառավարման, աղբահանության և սանիտարական մաքրման խնդիրները:

/Զեկ. Վանիկ Հարությունյան - մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության պետ/

6. Այլ հարցեր:

Մարզի խորհրդի աշխատանքներն ամփոփեց ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանը:

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի համայնքների ղեկավարներին առաջարկվեց՝

1. Գարնան գյուղատնտեսական աշխատանքներին ընդառաջ 2025թ. ՀՀ Կառավարության կողմից իրականացվող գյուղատնտեսության ոլորտի պետական օժանդակության ծրագրերի վերաբերյալ համայնքներում ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության աշխատակիցների մասնակցությամբ կազմակերպել և իրականացնել իրազեկման աշխատանքներ:

2. Գարնանային հեղեղումների և սելավների վտանգների կանխարգելման նպատակով իրականացնել կանխարգելիչ աշխատանքներ:

3. Մանկապարտեզների շահագործման, գույքի և լիցենզիաների ձեռքբերման և շահագործման աշխատանքները կազմակերպել սահմանված ժամկետներում և գործող ընթացակարգերին համապատասխան:

4. **Սուբվենցիոն ծրագրերի փաթեթները ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմ ներկայացնել սահմանված ժամկետներում:**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ՝

03.04.2025

X

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Подписано: SARGSYAN KAREN 3710840503

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ